պետովիչք, Գերեմեթովիչք, Աղանովիչք, Սիմոնովիչք, Ռոչքան, Գաբրելովիչք և Մըսրովիչք, և այլք։

Այս աւագ մարդիկն իրենց միջէն կ'ընտրէին կառավարիչ պաշտօնեաներ, որոց գերագոյնն էր վոյր կամ ազգագլուխը, որոյ կու տային ընտրութեամբ ութ առաջիկայ կամ խորհրդական, որոց գլխաւորը երէցփոխանն էր և տեղական ազգագլխոյն։ Բաց 'ի սոցանէ կ'ընտրէին ևս քառասուն Ընկերք կամ Եղբարք, որոց ներկայութեամբ և խորհրդով կը վարէին դատաստանք, և վճիռները քարտուղարն 'ի գիր կ'անցնէր։ Դատաստանական մատեաններէն կ'երևայ որ՝ վոյթն ընդհանուր օրինաց կամ արդարութեան պաշտօնեայ է, իսկ ազգային շահուց, եկեղեցեաց և դպրոցաց վերակացու և պաշտպան՝ երէցփոխանն է, ութ առաջիկայից գլխաւորն։ Անուանի և բազում գովեստից արժանի է երէցփոխանաց կարգին Պարոն Մխիթոյ, որդի Տօնուշի, իւր երկար և արդիւնական պաշտօնավարութեամբ։ Կամենիցի Հայոց դատարանին մատեանք լի են սորա գործերով ԺԶ-ԺԷ դարերուն մէջ։ Եկեղեցեաց և առաջնորդարանաց նորոգման և շինութեան միջոց, արդեամբ և աշխատութեամբ մեծամեծ ծառայութիւններ մատուցած է ազգիս պատուական երէցփոխանն։ Նորա անուան մեծ փառք բերողը, 1604 ին Կամենիցի մեծ հրդեհէն վերջը, դէմ ընդ դէմ միմեանց երկու երկսեռ դպրոցաց կանգնումն է, որպէս զի նոցա մէջ հայ մանկտին ուսանի իւր մայրենի լեզուով կրօնք և աստուածպաշտութիւն։ Եթէ Մխիթոյի՝ արժանաւոր երէցփոխանք ունա յաջորդած լինէին՝ ցայսօր կենդանի կը մնար 'ի Կա-